ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

ՈՐՈՇՈՒՄ

23 ապրիլի 2013 թ.

ՀՀ ԳԱԱ տարեկան ընդհանուր ժողովը լսելով և քննարկելով ՀՀ ԳԱԱ նախագահ Ռ.Մ.Մարտիրոսյանի՝ ՀՀ ԳԱԱ 2012թ. գիտական գործունեության արդյունքների մասին զեկուցումը, արձանագրում է, որ 2012 թվականին համակարգի բոլոր գիտական կառույցներում շարունակվել են հիմնարար և կիրառական բնույթի գիտական մշակումները բազային ֆինանսավորմամբ, նպատակային, թեմատիկ ու միջազգային ծրագրերով և պայմանագրերով:

2012 թվականին շարունակվել են Գիտությունների ազգային ակադեմիայի համակարգի պետական ոչ առևտրային կազմակերպությունների՝ նոր խմբագրությամբ ընդունված կանոնադրությունների հաստատման և պետական գրանցման գործառույթները: 2011 թվականին ընդունված ՀՀ ԳԱԱ մասին օրենքը, ԳԱԱ-ի նոր կանոնադրությունը հնարավորություն տվեցին ինստիտուտների գիտաշխատողներին մասնակցել ակադեմիայի վարչական մասի կազմավորման գործընթացին, զբաղվել ձեռնարկատիրական լայնածավալ գործունեությամբ, առևտրայնացնել գիտական արդյունքների կիրառական մասը:

Հաշվետու տարում տեղի են ունեցել համակարգի մի շարք ինստիտուտների տնօրենների ընտրություններ:

2012 թվականին անց է կացվել Վ.Համբարձումյանի անվան երկրորդ միջազգային մրցանակաբաշխությունը: Հաղթող են ճանաչվել միջազգային ճանաչում ունեցող գիտնականներ Յան Էյնաստոն (Էստոնիա) և Իգոր Նովիկովը (Ռուսաստանի Դաշնություն): Դափնեկիրները պարտավորվել են գիտական լայնածավալ գործունեությամբ աջակցել Հայաստանում աստղաֆիզիկայի զարգացմանը:

2012 թ. գիտական ստորաբաժանումներում պահպանվել է հետազոտությունների գիտական բարձր մակարդակը: Այդ են վկայում արտասահմանյան հեղինակավոր գիտական ամսագրերում հրատարակված

աշխատանքները՝ 762 գիտական հոդված և 18 մենագրություն, ինչպես նաև 81 միջազգային ծրագրերով կատարված աշխատանքները:

2012 թ. առաջնահերթ ուշադրություն է դարձվել Հայաստանի Հանրապետությունում հայագիտության զարգացման խնդիրներին, հաստատվել են ոլորտի զարգացման հայեցակարգը, ռազմավարությունը, դրա իրականացման միջոցառումների ժամանակացույցը, ստեղծվել է հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող հիմնադրամ, հաստատվել է նրա կանոնադրությունը:

Ինչպես վերջին մի քանի տարիների ընթացքում, այնպես էլ հաշվետու տարում միջազգային գիտատեխնիկական համագործակցությունը համարվել է ՀՀ ԳԱԱ նախագահության գործունեության կարևորագույն բնագավառներից մեկը: Միջազգային կապերի շնորհիվ համակարգի գիտնականները իրենց գիտական ձեռքբերումները ներկայացրել են միջազգային գիտական հանրությանը համատեղ ծրագրերի շրջանակներում, օգտվել են ժամանակակից գիտական խոշոր կենտրոնների ինֆրակառուցվածքից, մասնակցել են միջազգային գիտատեխնիկական ծրագրերին:

ԳԱԱ միջազգային համագործակցության մասը կազմող ԳԱԱ արտասահմանյան անդամների հետ տարվող աշխատանքների շնորհիվ իրականացվել են համատեղ հետազոտություններ, մշակվել են հետազոտական նոր ծրագրեր, պատրաստվել և վերապատրաստվել են մասնագետներ, կնքվել են արտասահմանյան գիտական կենտրոնների և ԳԱԱ համակարգի կազմակերպությունների համագործակցության պայմանագրեր և համաձայնագրեր, հրատարակվել են համատեղ աշխատություններ, արտասահմանյան անդամները մասնակցել են Հայաստանում կազմակերպվող գիտակրթական և գիտակազմակերպական միջոցառումներին:

Ակադեմիան, շահագրգռված լինելով բարձր որակավորում ունեցող մասնագետների հարցում, ակտիվորեն համագործակցել է հանրապետության բուհերի հետ, համատեղ գործող գիտական և ուսումնական կառույցներում իրականացվել են համատեղ գիտական հետազոտություններ: Այսօրինակ համագործակցություն է ծավալվել ԵՊՀ-ի, Հայ-Ռուսական, Ճարտարագիտական, Մանկավարժական համալսարանների, Գյուղատնտեսական ակադեմիայի և այլ

կառույցների հետ: Համագործակցության լավագույն դրսևորումն է նաև համատեղության կարգով Ակադեմիայի համակարգի մոտ 50% գիտաշխատողների աշխատանքը բուհական և այլ գերատեսչական համակարգերում. ընդհանուր առմամբ, ԳԱԱ 200-ից ավել մասնագետներ նպաստել են ուսումնական, գիտական և արտադրական բազմաթիվ հիմնարկների գործունեությանը:

Նշելով հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ ԳԱԱ համակարգում տեղ գտած դրական տեղաշարժերը և նշանակալից ձեռքբերումները՝ ընդհանուր ժողովը միաժամանակ ընդգծում է ՀՀ ԳԱԱ աշխատանքներում առկա բացթողումներն ու թերությունները և նշում է այն կարևորագույն խնդիրները, որոնց լուծումից է կախված համակարգի հետագա գործունեության արդյունավետությունը:

Ինստիտուտների ինֆրակառուցվածքները դեռևս համալրված չեն գիտատեխնիկական ժամանակակից միջոցներով, որի հետևանքով աստիճանաբար կարող են նվազել հիմնարար բնույթի աշխատանքները, ինչն անվերապահորեն կարող է ազդել տարածաշրջանում ակադեմիայի առաջատարի վարկանիշի վրա:

Վերջին 1-2 տասնամյակում միջին սերնդի գիտնականների թվաքանակը շեշտակի նվազել է: Շտապ անհրաժեշտ է ձեռնարկել գործնական քայլեր միջին սերնդի կադրերին ինստիտուտներում ինտեգրելու ուղղությամբ:

Ժողովը նշում է, որ 2012թ. սոցիալական հարցերը եղել են ԳԱԱ ուշադրության կենտրոնում: Սակայն որոշ հարցերում, մասնավորապես աշխատանքային պայմանների բարելավման գործում, Էական առաջընթաց չի գրանցվել: 2-3 տասնամյակ ի վեր չեն վերանորոգվել ինստիտուտների մասնաշենքերը, լաբորատորիաները, գիտության ամբողջ ինֆրակառուցվածքը: Վերանորոգման փոքրամասշտաբ աշխատանքներ իրականացվել են արտաբյուջետային միջոցների հաշվին, իսկ փոքրաթիվ նոր սարքավորումները ձեռք են բերվել դրամաշնորհային և միջազգային ծրագրերին մասնակցության արդյունքում: Ծառացած խնդիրների լուծմանը կարող է նպաստել նաև որոշ ազատ տարածքների իրացումից ստացված ֆինանսների ներդրումը զարգացման ծրագրերում:

Սոցիալական դժվար լուծելի խնդիրներից է բնակարանային պրոբլեմը, որն առավել խոցելի է հատկապես երիտասարդների դեպքում: Երիտասարդ գիտաշխա-տողների համար բնակելի շենքի շինարարական աշխատանքներն ընթանում են շատ

դանդաղ, ինչը առաջացրել է երիտասարդ գիտաշխատողների արդարացի դժգոհությունը:

ՀՀ ԳԱԱ Ընդհանուր ժողովը, ելնելով վերը շարադրածից, որոշում է հավանություն տալ ՀՀ ԳԱԱ 2012 թ. գործունեությանը:

ՀՀ ԳԱԱ գործունեությունը առավել արդյունավետ դարձնելու նպատակով ՀՀ ԳԱԱ ընդհանուր ժողովը որոշում է իրագործել հետևյալ միջոցառումները.

1. Շարունակել իրագործել գիտակազմակերպչական միջոցառումներ՝ ինստիտուտներում կիրառական և ներդրումային բնույթի գիտական հետազոտությունների զարգացումը խրախուսելու նպատակով:

2. Նպաստավոր պայմաններ ստեղծել ասպիրանտուրան ավարտած երիտասարդ գիտնականներին գիտական կազմակերպություններում աշխատանքով ապահովելու համար:

3. Զարգացնել և ընդլայնել համագործակցությունը հայրենական և արտերկրի գիտական կազմակերպությունների և գիտնականների հետ:

4. ԳԱԱ գիտական հանդեսների բովանդակային պատշաճ որակի ապահովման համար աջակցել նրանց էլեկտրոնային կայքերի ստեղծմանը և զարգացմանը, նպաստել էլեկտրոնային գրադարանների ստեղծման գործընթացին:

5. ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերում քննարկել ԳԱԱ բաժանմունքների ընդհանուր ժողովներում բարձրացրած կարևորագույն հարցերը:

6. Գիտական դպրոցների պահպանման նպատակով հատուկ ուշադրություն դարձնել միջին սերնդի գիտնականների վիճակը բարելավելու վրա:

7. Հանձնարարել ՀՀ ԳԱԱ նախագահությանը միջոցներ ձեռնարկել ինովացիոն աշխատանքների խթանման ուղղությամբ:

8. Հատուկ աշխատանք տանել գիտական կազմակերպությունների ղեկավար պաշտոնների փոխարինողների / ռեզերվի/ կազմի հետ:

9. Հանձնարարել ՀՀ ԳԱԱ նախագահին՝ դիմել ՀՀ կառավարություն հետևյալ հարցերով.

ա/ բարձրացնել ՀՀ ԳԱԱ գիտաշխատողների աշխատավարձը,

բ/ գիտական նյութերն ու սարքվորումները, ինչպես նաև միջազգային դրամաշնորհները ազատել բոլոր տեսակի հարկերից և տուրքերից,

/կատարելագործել հարկային դաշտը գիտական և գիտատեխնիկական բնագավառում/,

գ/ մտավոր գործունեություն իրականացնողների արտոնությունները տարածել նաև գիտաշխատողների վրա, մասնավորապես արձակուրդների հարցում,

դ/ լրացուցիչ միջոցներ տրամադրել ՀՀ ԳԱԱ ինստիտուտների ենթակառուցվածքների վերանորոգման և արդիականացման աշխատանքների իրականացման համար,

ե/ գիտական աստիճանների համար տրվող հավելավճարները ավելացնել կենսաթոշակին:

ՀՀ ԳԱԱ ՆԱԽԱԳԱՀ Ռ.Մ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ-ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ.Հ.ՄԱԹԵՎՈՍՅԱՆ